



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Ն. ՄԱԿՐԻՑԻՆ

ԻՆՉՈ ՊԳԱՏ ԿԸԸ  
ԿՈԼԼԵԳԻՎԱՑՈՒՅՑ  
ՎՈՐԽԱՐԱՊԱՀ  
ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

ՊԵՏՀՐԱՍ—1930—ՑԵՐԵՎԱՆ






Ն. ՄԱԼԻԹՅԱՆ

338.1K

ԵՆՉՈ ՈԳՈՒՏ ԿՏԱ  
 ԿՈԼԵՎԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ  
 ՎՈՐԱՎՐԱՊԱՀ ԳՅՈՒՂԱՑՈՒՆ

4360

10043



X

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԹԵՐԵՆԻ, Ա. Տ - 1920

Հրատ. № 1190.

Գրառ. № 3054(բ)

Պատ. № 189.

Տիրաժ 4000

---

Պետհրատի 2-րդ տպարտն Յերևանում

ՎՈԶԽԱՐԱՄԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵ-  
ՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՃՅՈՒՂԵՐԻՑ ՄԵԿՆ Ե

Մեր գյուղացիք շատ հին ժամանակներից  
են զբաղվում վոչխարապահությամբ։ Մեր յեր-  
կիրը, ինչպես նաև Խ. Աղբբեջանն ու Վրաստանը,  
առանձնապես բնական պայմաններ ունեն վոչ-  
խարապահությամբ զբաղվելու համար, վորովհետեւ  
մենք հարուստ ենք այնպիսի արոտատեղիներով,  
վորոնք իրենց անհարմար դիրքի և ցածր բու-  
սականության պատճառով իրրե խոտհարք կամ  
տափարի արոտատեղ ծառալի չեն կարող, բայց  
հիանալի կերպով ողտագործվում են վոչխար-  
ների և այծերի կողմից։

Մեր գյուղերում վոչխարն ամենատա-  
րածված կենդանին ե. քիչ անտեսություններ  
կպատահեն, վոր գոնե միքանի վոչխար չունենան։  
Պատճառն այն ե, վոր վոչխարը փոքր, եժան,  
գիմացկուն և քիչ կեր ու ինսամբ պահանջող  
կենդանի յե, նա արագ բազմանում ու չաղա-  
նում ե ե, վոր գլխավորն ե, գյուղացուն տա-  
լիս ե բազմատեսակ մթերքներ — միս, կաթ, բուրդ,  
մորթի և այլն, վորոնցով նա հոգում ե իր  
մնունզն ու հագուստը։

ՄԵՐ ՎՈՉԽԱՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ  
ԲՆՈՒԹՅ ՈՒՆԻ

Զնայած վոր մեր գյուղացիք վաղուց են զբաղվում վոչխարապահությամբ, բայց և այնպես մեր վոչխարապահությունը յետ ե մնացել թե քանակով և թե վորակով։ Մեր տեղական վոչխարի մսի, բրդի քանակն ու վորակը համեմատաբար ցածր ե։ Այդ ե պատճառը, վոր մեր գյուղացին մեկ զլուխ վոչխարից տարեկան հաղիվ 2—3 ո. մաքուր ոգուտ ե ստանում, մինչդեռ յեվրոպական գյուղացին՝ միքանի անգամ շատ։

Մեր տեղական վոչխարների քանակի, ինչպես և նրանց արտադրած մթերքների քչության հետևանքով ե, վոր մեր վոչխարապահությունը մեծ մասամբ սպառողական ընույթ ունի, այսինքն տնտեսության վոչխարների թե քանակը և թե նրանցից ստացված մթերքները՝ միուր, կաթը, բուրդը այնքան քիչ են, վոր հաղիվ բավարարում են գյուղացու տնտեսության կարիքները, ուրիշ խոսքով՝ գյուղացին այդ մթերքներն ինքն ե գործադրում — սպառում, և ավելորդ չի մնում, վոր նա շուկա հանի և ծախի։ Միայն կուլակա յին տնտեսությունները մեծ թվով վոչխար ունենալով՝ հնարավորություն ունեն ավելցուկը շուկա հանելու և ծախելու։

ՄԵՐ ՎՈԶԽԱՐԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Ե ԴԱՌՆԱ  
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ

Մեր ժողովրդական տնտեսության զարգացումը, մեր սոցիալիստական շինարարությունը պահանջում են, վոր մեր ամբողջ անասնապահությունը, ուրեմն և վոչխարապահությունը դառնա արդյունաքարական, այսինքն քանակով և վորակով այնքան զարդանա, վոր չքավոր և միջակ վոչխարապահներն, իրենց սպառողական կարիքները հոգալուց բացի, վորոշ ավելցուկ արտադրեն մեր քաղաքների բանվորության, մեր արդյունաբերության կարիքները բավարարելու համար։ Մեր ֆաբրիկաներին անհրաժեշտ ե մեծ քանակությամբ և լավորակ բուրդ զանազան գործվածքներ պատրաստելու և բանվորներին ու գյուղացիներին հաղուստ մատակարարելու համար։ այդ բուրդը պետք ե արտադրվի մեր Միության սահմաններում, վորպեսզի մենք ստիպված չլինենք արտասահմանից թանգ գնով բուրդ գնելու, վորովհետեւ դրանով կբարձրանա մեր գործարանների արտադրած գործվածքների ինքնարժեքը, ուրեմն և բանվորի ու գյուղացու հաղուստի գինը։

## ՄԵՐ ՎՈՉԽԱՐԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր վոչխարապահությունը շարունակում է մնալ սպառողական գլխավորապես այն պատճառով, վոր նա ունի մի շարք խոշոր պակասություններ, վորոնք արգելք . են հանդիսանում նրա զարգացմանը: Իսկ այդ պակասությունները վերացնելու համար անհրաժեշտ են խոշոր դրամական միջոցներ և միահամուռ մեծ աշխատանք: Հետևաբար մեր անհատական, մանր և թույլ վոչխարապահական տնտեսությունները չեն կարողանա առանձին-առանձին վերացնել այդ պակասությունները և իրենց վոչխարապահությունը դարձնել արդյունաբերական: Անհրաժեշտ ե, վոր նրանք միանան և կոլեկտիվ աշխատանքով ու միջոցներով աշխատեն վերացնել այդ պակասությունները, ուրիշ խոսքով՝ կազմակերպեն կոլեկտիվ վոչխարապահություն: Տեսնենք, թե ինչ պակասություններ ունի մեր վոչխարապահությունը, և ինչպես կվերանան այդ պակասությունները կոլեկտիվ վոչխարապահության անցնելու գեղքում:

### ԿԵՐԻ ԲԱՎԱՐԱՐ ՊԱՇԱՐ ԶԿԱ

Մեր վոչխարապահության կերի հիմնական աղբյուրը հանդիսանում են արոտները: Մեր վոչխարները համարյա տարին բոլոր արածում

են դրսում — գարնանից մինչև ուշ աշուն ամառա-  
լին արոտներում, իսկ ձմեռը՝ ձմեռային արոտ-  
ներում։ Մակայն այդ արոտներում մեր վոչխար-  
ները բավարար կեր են գտնում 5 - 8 ամիս,  
նայած թե վոր շրջանում ե, իսկ մեացած ժամա-  
նակն ապրում են կիսաքաղց կամ քաղցած դրու-  
թյամբ իհաշիվ ամառը կուտակած ճարպի և մսի։  
Մեր վոչխարների դժբախտությունն սկսվում ե  
այն ժամանակվանից, յերբ ձյունը ծածկում է  
զետինը, առանձնապես ձմեռվա վերջին և գար-  
նան սկզբին, յերբ տնտեսության կերի պաշարը  
սովորաբար վերջանում ե, իսկ արոտը դեռ չե  
բացվել։ Ահա այդ շրջանում վոչխարները վոչ  
միայն նիհարում են, այլև հիվանդանում կամ  
սովամահ են լինում։ Այդ բոլորն առաջանում ե  
նրանից, վոր մեր վոչխարապահ գլուղացիները  
վոչխարների ձմեռվա խոտի պաշար չեն տեսնում։

Չնայած վոր մեր յերկիրը բավականին մեծ  
տարածություն խոտհարքներ և արոտատեղիներ  
ունի, սակայն նրանք այնքան բուսականություն  
չունեն, վոր կարողանան բավարարել մեր անաս-  
նապահության կանաչ կերի և խոտի պահանջը։  
Մեր լեռնային արոտները շատ վաղուց ե, վոր  
ոգաապործվում են մեր գլուղացիների կողմից,  
բայց վոչ կուլտուրական ձեռվ, այդ պատճառով  
նրանք փշացել են, բուսականությունից աղքա-

տացել։ Նրանք տարեցտարի ավելի յեն վատանում, և շատ հեռու չե այն ժամանակը, յերբ մենք կզրկվենք մեր յերբեմնի հիանալի և փարթամ արոտներից, յեթե կտրուկ միջոցներ ձեռք չառնենք։ Արոտների փշանալու գլխավոր պատճառը նրանց անկանոն ոգտագործումն եւ։ Գարունը բացվելուն պես, դեռ հողը չչորացած, ցեխ ժամանակ գյուղացիք իրենց վոչխարներին քշում են դեպի լեռնային արոտները, վոչխարները տրորելով ցեխոտ գետինը՝ առաջացնում են փոսեր, վորտեղ ջուր եւ հավաքվում և ճահճանում, բացի այդ դեռևս մատղաշ ոգտակար բույսերը տրորվում-փշանում են, իսկ նրանց փոխարեն աճում են անպետք և աներես բույսեր։

Մեր արոտները միաժամանակ ծանրաբեռնված են չափից դուրս կենդանիներով, այդ պատճառով բոլորին չեն կշտացնում և բուսականությունը շուտ ել վերջանում եւ։ Բացի դրանից՝ մեզ մոտ արոտները մաս-մաս և հերթականությամբ ոգտագործելու սովորություն չկա, դրա հետևանքով արոտը ժամանակ չի ունենում հանգստանալու և նորից կանաչելու։ Ել չենք խոսում այն անհրաժեշտ խնամքի մասին, վոր պետք եւ գործադրվի արոտի կյանքը յերկարացնելու համար, այսինքն արոտատեղի պարարտացման, փոցխելու և այլ միջոցների մասին։

Դատ են նաև մեր խոտհարքները. նրանք նույնպես այնքան են թուլացել, այնքան քիչ խոտ են տալիս, վոր հաղիվ բավարարում ե խոշոր կենդանիների ձմեռվա պահանջը, իսկ վոչխարների համար համարյա բոլորովին չի մնում: Այդ պատճառով ձմեռը գյուղում պահված վոչ խարներին զյուղացին կերակրում ե մեծ մասամբ դարձանով, այն ել այնքան ե տալիս, վոր սովածահ չլինեն: Մեզ մոտ վոչխարներին ձմուանը ուժեղ կեր տալու սովորություն չկա: Մինչդեռ յելքոպական յերկրներում վոչխարներին բացի խոտից տալիս են նաև ուժեղ կեր,—քուսպ, թեփ, և այլն, վորպեսզի նրանք վոչ միայն չնիհարեն ու սատկեն, այլև չաղանան, լավ դառներ բերեն և շատ կաթ ունենան նրանց կերակրելու համար:

## ՄԵՐ ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ՊԱՇՎԱԾՔՆ ՈՒ ԽՆԱՍՔՆ ԱՆԲԱՎԱՐՄՐ Ե

Մեզ մոտ ընդհանրապես անասոնների պահվածքն ու խնամքն անբավարար ե, իսկ վոչխարներինը՝ առանձնապես: Վոչխարներին ներսն են պահում այն ժամանակ, յերբ խորը ձյուն ե յեկել, և արածելու հնարավորություն չկա: Վոչխարների համար շինված հատուկ կանոնավոր փառախ չկա: Վոչխարներին անում են մի նեղ ու

տացել։ Նրանք տարեցտարի ավելի յեն վատանում, և շատ հեռու չե այն ժամանակը, յերբ մենք կզրկվենք մեր յերբեմնի հիանալի և փարթամ արոտներից, յեթե կտրուկ միջոցներ ձեռք չառնենք։ Արոտների փշանալու գլխավոր պատճառը նրանց անկանոն ոգտագործումն եւ։ Գարունը բացվելուն պես, դեռ հողը չչորացած, ցեխ ժամանակ գլուղացիք իրենց վոչխարներին քշում են դեպի լեռնային արոտները, վոչխարները տրորելով ցեխոտ գետինը՝ առաջացնում են փոսեր, վորտեղ ջուր և հավաքվում և ճահճանում, բացի այդ դեռևս մատղաշ ոգտակար բույսերը արորվում-փշանում են, իսկ նրանց փոխարեն աճում են անպետք և աներես բույսեր։

Մեր արոտները միաժամանակ ծանրաբեռնված են չափից դուրս կենդանիներով, այդ պատճառով բոլորին չեն կշտացնում և բուսականությունը շուտ ել վերջանում եւ։ Բացի դրանից՝ մեզ մոտ արոտները մաս-մաս և հերթականությամբ ոգտագործելու սովորություն չկա, դրա հետևանքով արոտը ժամանակ չի ունենում հանգստանալու և նորից կանաչելու։ Ել չենք խոսում այն անհրաժեշտ խնամքի մասին, վոր պետք ե գործադրվի արոտի կյանքը յերկարացնելու համար, այսինքն արոտատեղի պարարտացման, փոցինելու և այլ միջոցների մասին։

Վատ են նաև մեր խոտհարքները. նրանք  
նույնպես այնքան են թուլացել, այնքան քիչ  
խոտ են տալիս, վոր հաղիվ բավարարում ե  
խոշոր կենդանիների ձմեռվա պահանջը, իսկ  
վոչխարների համար համարյա բոլորովին չի մնում:  
Այդ պատճառով ձմեռը գյուղում պահված վոչ  
խարներին գյուղացին կերակրում ե մեծ մասամբ  
դարձանով, այն ել այնքան ե տալիս, վոր սովա-  
մահ չլինեն: Մեզ մոտ վոչխարներին ձմռանը  
ուժեղ կեր տալու սովորություն չկա: Մինչդեռ  
յեվրոպական լերկրներում վոչխարներին բացի  
խոտից տալիս են նաև ուժեղ կեր,—քուսպ,  
թեփ, և այլն, վորպեսզի նրանք վոչ միայն  
չնիհարեն ու սատկեն, այլև չաղանան, լավ  
զառներ բերեն և շատ կաթ ունենան նրանց  
կերակրելու համար:

## ՄԵՐ ՎՈԶԽԱՐՆԵՐԻ ՊԱՀՎԱԾՔՆ ՈՒ ԽՆԱՄՔՆ ԱՆԲԱՎԱՐՄՐ Ե

Մեզ մոտ ընդհանրապես անասո նների պահ-  
վածքն ու խնամքն անբավարար է, իսկ վոչխար-  
ներինը՝ առանձնապես: Վոչխարներին ներսն են  
պահում այն ժամանակ, յերբ խորը ձյուն ե լեկել,  
և արածելու հնարավորություն չկա: Վոչխար-  
ների համար շինված հատուկ կանոնավոր փա-  
քախ չկա: Վոչխարներին անում են մի նեղ ու

մութ տեղ, վորտեղ նրանք իրար վրա խռնված նստում են մեզի և կտիտի մեջ, տակները չի մաքրվում:

Փարախում ողափոխություն չի կատարվում: Մեզից գետինը դառնում ե ցեխ, վորից կեղառություններ են առաջանում, վոչխարների բուրդը: Բացի այդ՝ կեղտոտության շնորհիվ հիվանդություններ են առաջանում, վորից լերբեմն մեծքանակությամբ վոչխարներ են կոտորվում: Այս վատ պայմաններում և կիսաքաղց ապրելով նրանք նիհարում են, թուլանում և հիվանդություններին չդիմանալով սատկում են:

Ծնելու շրջանում այնքան նիհարած են լինում, վոր իրենց կաթով գառներին անգամ չեն կշտացնում, միայն արոտի առատանալուց հետո ապրիլ, մայիս ամիսներին նրանց կաթը շատանում և գառներին կշտացնում են: Իսկ սկսում են կթվել միայն մայիսից, և տեսում ե 2—3 ամիս:

## ՄԵՐ ՎՈՉԽԱՐՆԵՐԻՑ ՇԱՏԵՐՆ ՍՏԵՐՁ (ՂԱՅՐ) ԵՆ ՄՆՈՒՄ

Տարվա մեջ մեր վոչխարների մոտ 9—10 տոկոսն ստերջ ե մնում, այսինքն վոչխարները չեն հղիանում և գառ չեն բերում. դրա հետևանքով դանդաղում ե մեր վոչխարների բնական աճումը, հետևաբար չի ավելանում մսի, բրդի և կաթի:

քանակը, վորից և տուժում ե մեր գյուղատընտեսությունը։ Այս լեռնութիւնների հիմնական պատճառը բավարար բանակով յեվ լավ խոյերի (ղու) պակասն ե։ Մեր վոչխարների հոտերում յերբեմն 100—150 վոչխարին մի խոլ ե ընկնում, լեղած խոյերն ել մեծ մասամբ անչափահաս են լինում, լավ չեն կարողանում ծածկել և բեղմնավորել։ Զափից ավելի աշխատելու հետևանքով խոյերը շատ շուտով ուժասպառ են լինում, դրա հետեւանքով շատ մաքիներ չեն բեղմնավորվում և մնում են ստերջ։

## ՄԵԶ ՄՈՏ ՎՈՉԽԱՐՆԵՐԻ ԶՏՈՒՄ ՅԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Մեր վոչխարների հոտի մեջ պատահում են թե շատ և լավ կաթ ու բուրդ տվող վոչխարներ և թե շատ վատեր։ Դյուղացին չի աշխատում ամեն տարի գիտակցորեն զտի հեռացնի իր հոտի անարդյունավետ վոչխարներին, վորպեսզի տարեցտարի նրանց թիվը պակասի և հոտն աղնվանա, այլ պահում ե լավն ու վատը միասին։ Հետազայում այդ վատերն ել տալիս են վատ սերունդ, և այդպիսով նրանց քանակը փոխանակ պակասելու, ավելանում ե։ Այդ ե պատճառը, վոր մեր վոչխարների արտադրողականությունը տարեցտարի մասսայականորեն չի բարձրանում, այլ, ընդհակառակը, իջնում ե։

Զի կատարվում նաև ընտրություն. իբրև  
տոհմացու (տամապլըդ) չեն ընտրում ու թող-  
նում լավ ծնողների սերունդը, այլ ինչ պատահեց:

### ՎՈՉԽԱՐԻ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԿՈՌՊԵՐԱՏԻՎ ՎԵՐԱ- ՄՇԱԿՈՒՄ ՅԵՎ ՎԱՃԱՌ-Ք ԶԻ ԿԱՏԱՐՎՈՒՄ

Մեզ մոտ վոչխարներից ստացված մթերք-  
ների, գլխավորապես կաթի, բրդի, մորթու կա-  
նոնավոր վերամշակում չի կատարվում: Վոչխա-  
րապահ գյուղացին այդ մթերքները վերամշա-  
կում ե նահապետական ձևով, այդ պատճառով  
ստանում ե ցածր վորակի պանիր և այլ մթերք-  
ներ, վորոնք շուկայում լավ գին չեն ունենում:  
Վոչխարապահ գյուղացին մենակ չի կարողանում  
իր մթերքները գործարանալին ձևով վերամշա-  
կել, վորպեսզի շուկայում լավ գին ստանա և  
ոգուտ ստանա, վորովնետն գործարանի սարքա-  
վորում ձեռք բերելն իր ուժերից վեր ե:

Արտադրված մթերքների մեծ մասն ընկ-  
նում է գյուղական չարչիների և սպեկուլանանե-  
րի ձեռքը: Ինարկե, չարչիները շատ ե եժան գնով  
վերցնում են այդ մթերքները գյուղացուց և  
թանգ գնով ծախում: Մինչդեռ կոռպերատիվ  
վաճառքի միջնորդ կարելի լե այդ մթերքներն  
անմիջականորեն ծախել քաղաքի աշխատավորու-  
թյանը և ավելի ձեռնոտու գներով:

Ահա այն զյխավոր պակասությունները, վորունի մեր վոչխարտպահությունը, այդ պակասությունները վերացնելն անհատական, մանր վոչխարտպահների ուժից վեր և, դրանք պահանջում են մեծ դրամական միջոցներ և խոշոր կոլեկտիվ աշխատանք:

Ներկայումս ամբողջ Խորհրդավին Միությունը լծված է մեր գյուղատնտեսության վերակառուցման գործին: Այդ վերակառուցման ամենաճիշտ և ամենակարճ ճանապարհը վողջ գյուղատնտեսության կոլեկտիվացումն ու մեքենայացումն է: Այս լերկու հզոր ազդակների միջոցով մենք կարճ ժամանակում վերակառուցելու լենք մեր լերկրի գյուղատնտեսությունը, կոլեկտիվացման և մեքենացացման պետք է լենթարկվի նաև մեր վոչխարտպահությունը, վորպեսզի սպառղական վիճակից դուրս գա և գառնա արդյունաբերական:

Յեթե մեր վոչխարտպահությունը շարունակի մնալ առաջվա նման մանր և անհատական, յերբեք ել նա ներկա դրությունից դուրս չի գա, նրա մեջ բարեփոխություն չի մտնի: Մեր վոչխարտպահության ապագան, նրա հետագա գարգացումը կապված է կոլեկտիվացման հետ:

Զքավոր և միջակ վոչխարտպահները միանալով և կազմելով մի մեծ և ուժեղ կոլեկտիվ՝ հնարավորություն կունենան պետության և կո-

ոպերացիայի ոժանդակությամբ կարճ ժամանակում բարձրացնել իրենց վոչխարների քանակն ու արդյունավետությունը, ուրեմն և նրանցից ստացվող յեկամուտը:

Տեսնենք, թե կոլեկտիվացման միջոցով ինչ բարեփոխություններ կմտնեն մեր վոչխարապահության մեջ և ինչպես կվերանան վերելում հիշված պակասությունները:

**ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ ՎՊՉԽԱՐԵՐԸ  
ԿԱՊԱՀՈՎՎԵՆ ԱՄԱՌՎԱ ՑԵՎ ԶՄԵՌՎԱ  
ԿԵՐՈՎ**

Վոչխարհապահական կոլեկտիվը պետությունից ստանալով անհրաժեշտ տարածությամբ առանձին արոտատեղ՝ իրկար ժամանակով՝ կոգտագործի այն ռացիոնալ ձեռվ, այսինքն արոտատեղը կրաժմանի առանձին կտորների և այն տեղ վոչխարներին կարածացնի մաս-մաս և հերթով, այս ձեռվ ամբողջ արոտատեղը միանգամից չի տրորվի, ապա և հնարավորություն կտրվի արդեն մեկ անգամ կերցված կտորին հանգստանալու և նորից կանաչով ծածկվելու:

Այս ձեռվ միևնույն արոտամասից ավելի շատ վոչխար կոգտվի և ավելի. յերկար ժամանակով: Ապա անհրաժեշտ բարելավումներ կմտցնի արոտատեղում, այսինքն կշինի ճանապարհներ

գեղի արոտը գնալու համար, լավ ընակարան  
ախտեղ ապրելու համար, կփոցիսի և կպարար-  
տացնի արոտները, քարերը կհավաքի, այդ մի-  
ջացներով արոտները կվերակենդանան և  
մշտական կերի աղբյուր կդառնան:

Կոլեկտիվը կուրսերի միջոցով իր անդամ-  
ներից կպարատատի գիտակից և կըթված հովիվ-  
ներ, վորոնք խելացի ձևով կարածացնեն վոչ-  
խարներին, կկշտացնեն նրանց:

Վոչխարներին ձևեռվա կերով ապահովելու  
համար կոլեկտիվը հինց աշնանից խոտի պա-  
շտը կտեսնի, իսկ ուժեղ կերեր—քուսպ, թեփ  
և ալին, կստանա գլուզկոսպերացիալից կոն-  
տրակտացիալի միջոցով։ Այսպիսով հնարավոր  
կլինի ձմեռը վոչխարներին կուշտ պահել և բար-  
ձրացնել նրանց արտադրողականությունը։ Ան-  
հատական տնտեսությունն իր միջոցներով այս  
բարելավումները լեռբեք ել չի կարողանա կտ-  
տարել։

## ԿԱԿԱՆԱ ՎՈԶԽԱՐՆԵՐԻ ՊԱՇՎԱԾՔՆ ՈՒ ԽՆԱՄՔԸ

Կոլեկտիվ վոչխարապահության դեպքում  
հնարավոր կլինի լավացնել վոչխարների պահ-  
պաժըն ու խնամքը։ Դրա ամենակարնոր միջոցը  
վոչխարների համար դիտության պահանջներին

բավարարող հատուկ բնակաբան՝ կոլլեկտիվ փարախ կառուցելն ե:

Կոլլեկտիվ փարախը կլինի լուսավոր, ընդարձակ, տաք, չոր և ոդափոխվող։ Այնտեղ հնարավորություն կլինի մաքրություն պահպանել։ Փարախը կունենա առանձին բաժանմունքներ մաքիների, խոյերի, գառների և հիվանդ վոչխարների համար։

Փարախում կլինեն մսուրներ, վոտրեղ կլցվեն վոչխարներին տրվող կերերը։ հարմար մսուրների շնորհիվ կերը գետին չի թափվի ու փչանա, ուրեմն և կերերի խնայողություն կլինի։ Փարախում կլինի նաև ջուր վոչխարների խմելու համար։ Այսպիսի փարախում վոչխարները կլինեն մաքուր, նրանց բուրդը չի կեղտոտվի ու փչանա, իրենց կզզան առուլգ ու առողջ, ավելի արագ կչաղանան, մեծ ու առողջ գառներ կծնեն և շատ կաթ կտան։

Կոլլեկտիվ փարախում վոչխարների կերակրումն ու խնամքը շատ ավելի քիչ ժամանակ և ծախս կպահանջի, քան յեթե ամեն մի տնտեսություն իր վոչխարներին առանձին պահեր։ Կոլլեկտիվի անդամները հերթով կաշխատեն փարախում, ազատ մնացածները կկատարեն ուրիշ աշխատանքներ։ Ուրեմն կոլլեկտիվ փարախի միջոցով մեկ կողմից կբարձրանա վոչխարների ար-

տաղբողականությունը, ուրեմն և ընդհանուր յեկամուտը, մյուս կողմից կերի, աշխատանքի և ժամանակի խնայողության միջոցով կիջնի վոչխարից ստացվող մթերքների ինքնարժերը, այսինքն՝ նրանք ավելի եժան կնսուեն տնտեսությանը, մի բան, վոր անհատ տնտեսությունները յերբեք ել չեն կարող գլուխ բերել:

Կոլեկտիվ փարախի միջոցով մեծ չափով կլրճատվեն վոչխարների հիվանդությունները, վորովհետեւ մաքուր, չոր և լուսավոր տեղում ընդհանրապես հիվանդության պարագիտները դարձանալ չեն կարող:

### ԿՐԱԿԱՍԻ ՍՏԵՐՁ ՄԱՔԻՆԵՐԻ ԹԻՎԸ

Վոչխարապահական կոլեկտիվը կապահովի իր վոչխարներին անհրաժեշտ քանակի լավ և չափահաս խոյերով, դրա հետեւանքով ստերջ մաքիների թիվը կպակասի, ավելի շատ դառներ կծնեն, կաթ ու բուրդը կշատանա:

### ԶՏՄԱՆ ՑԵՎ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԻԶՈՑՈՎ ՎՈԶ- ԽԱՐՆԵՐԻ ՑԵՂԸ ԿԱԶՆՎԱՆԱ

Վոչխարապահական կոլեկտիվը կանոնավոր գոտում և ընտրությունն կկատարի իր հոտի (սուրուի) վոչխարների մեջ: Տարեվերջին (աշնանը) բոլոր վատ, պատաժած և անսարդյունավետ վոչ-

խարները հոտից կհեռացվեն։ Կընարվեն ու կպահ-  
վեն միայն լավ կաթ և բուրդ տվող ծնողների  
սերունդները, մնացածները կմորթվեն կամ կծախ-  
վեն։ Այս ձեռվ հնարավոր կլինի միքանի տա-  
րում հոտի վոչխարների ցեղը մասսայականորեն  
ազնվացնել և նրանց արդյունավետությունը  
բարձրացնել։

**ԽՈՇՈՐ ՅԵՎ ՈՒԺԵՂ ԿՈԼԼԵԿՏԻՎԸ ՀՆԱՐԱՎՈՐՈՒ-  
ԹՅՈՒՆ ԿՈՒՆԵՆԱՎ ՎԱՐՁԵԼ ՄԱՍՆԱԳԵՏ  
ՎՈԶԽԱՐԱԲՈՒՅՑ**

Մասնագետ վոչխարաբուլժը կղեկավարի վոչ-  
խարների զտման և ընտրության աշխատանք-  
ները, կսովորեցնի վոչխարների որինակելի  
խնամքի և կերակրման ձեռքը, և թե ինչպես  
կովել վոչխարների այս կամ այն հիվանդության  
դեմ, ինչպես վերամշակել կաթը, ինչպես  
խուզել և պահել բուրդը։

**ՎՈԶԽԱՐԻ ԿԱԹԻ ՅԵՎ ՄՅՈՒՍ ՄԹԵՐՔՆԵՐԻ  
ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ԿԿԱՏԱՐՎԿ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ  
ԶԵՎՈՎ**

Անհատ տնտեսությունների վոչխարներից  
ստացված կաթը նախ մաքուր չի լինում, ապա  
և նրանից պատրաստված պանիրը լավ վորակի

չի լինում և լավ գնով չի ծախվում։ Գործարանալին ձեռվ կաթը վերամշակելիս կարելի կլինի պատրաստել բարձր վորակի թանգարժեք պանիքներ, բացի այդ՝ պատրաստության ծախսերն ավելի քիչ կլինեն և նույն քանակությամբ կաթից ավելի շատ պանիք կպատրաստվի, քան թե անհատ տնտեսությունների դեպքում։


Կոլեկտիվը ձեռք կրերի նաև բուրդ խուզելու մեջենա, վորով այդ աշխատանքն ավելի հեշտ և արագ կկատարվի, ուրեմն և ժամանակի խնալողություն կլինիւ։


## ՄԹԵՐՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԸ ԿԿԱՏԱՐՎԵ ԿՈՌԵՐԱՏԻՎ ԶԵՎՈՎ ՅԵՎ ԱՎԵԼԻ ԶԵՌՆՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ


Կոլեկտիվն իր արտադրած մթերքները կամքարի իր պահեստներում, կղասավորի, կտեսակավորի, կծրաբի և անմիջականորեն կծախի պետական կամ կոռովերատիվ որդաններին և վոչ թե չարչիներին ու սպեկուլյանտներին և դիմացը կատանա գործարանային ապրանքներ, մանուֆակտուրա, պլուղատնտեսական գործիքներ և այլն։


Ահա այն հիմնական և գլխավոր ոգուտները, վոր կստանա վոչխարապահ պյուղացին կոլեկտիվացման միջոցով։ Գիտակից վոչխարապահ-


ները չեն ուշանա, շուտով կձեռնարկեն իրենց  
վոչխարների կողեկտիվացմանը, վորով թե  
իրենք և թե վոչխարները դուրս կգան այն վի-  
ճակից, վորի մեջ ներկայումս ապրում են:











ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039607

(064) ԳԻՒԸ 4 ԿՈՄ ԱՎՍ. (3-4 մայուս)

A I  
4360



---

Н. Малатян

## Какую пользу принесет коллективизация овцеводу-крестьянину

---

Госиздат ССР Армении  
Эривань—1930